*ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ 1*

*ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՐԱՎԱՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ*

*«20» հունվարի 2012թ.* *գ. Հայրավանք*

*ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

---

*Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. 2387-Ն «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և տեղեկացման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգ հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» որոշման պահանջներով՝ որոշում եմ՝*

1. *Հայրավանք համայնքի բնակիչ Կարո Ռուբիկի Բուդաղյանին՝ ըստ փաստացի բնակության վայրի տրամադրել նոր հասցե՝ Համալիրի փողոց I նրբանցք տուն 2/1:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

*Համայնքի ղեկավար՝* *Դ. Բադոյան*

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՐԱՎԱՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«02» փետրվարի 2012թ. գ. Հայրավանք

### Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի տարեկան գույքագրման հանձնաժողով ստեղծելու մասին

---

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածի դրույթներով՝ որոշում եմ.

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի հաշվառման և գույքագրման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝
   - Հանձնաժողովի նախագահ՝ Անտոն Վիրաբյան
   - Անդամներ՝ Մերուժան Մաղաքյան
   - ----------------- Անահիտ Բոխյան
   - ----------------- Ռուբիկ Բուդաղյան

2. Հաշվառումը և գույքագրումը կատարել ս/թ փետրվարի 6-ից մինչև փետրվարի 17-ը և կազմել համապատասխան հաշվետվություն՝ գույքի ֆիզիկական վիճակի վերաբերյալ:
3. Հաշվետվությունը ներկայացնել ավագանու քննարկմանը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ Դ. Բադոյան

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՐԱՎԱՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«07» փետրվարի 2012թ. գ. Հայրավանք

Համայնքի տարածքում անասնաբուժական ծառայությունների կազմակերպման մասին

---

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 44-րդ հոդվածի դրույթներով՝ որոշում եմ.

1. Համայնքի տարածքում անասնաբուժական ծառայությունների, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպումը և հսկողությունը դնել անասնաբույժ Գևորգ Օհանի Թադևոսյանի վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ Դ. Բադոյան